է մինչև ծնկները. կարում են՝ ոդքատները կտաւից, իսկ հարուստները ֆասօնիայից, մթխալից, եռգդի զատաքից և մետաքսից (սև, մոխրագոյն, կապոյտ). թևերը կարուած են մինչև արմունկը, ապա կոճկւում է բազուկի վրայից 5 կոճակով։

Գoտի (շալ): Փաթաթում են կապայի վրայից, որ ունի 3—4 գազ երկարութիւն. շինուած է եռգդի բրդից կամ կտաւից։

Քուլաչա (Սարդարի): Կապայի վրայից են հագնում ձմեռ ժամանակ, որ հասնում է մինչև ծնկները. կարում են տաբայից, ֆասօնիայից, պանեայից, մահուդից (սև, կապոյտ). թևերի ծայրերը նեղ են և կոճկւում է 2—3 կոճակով. կուրծքը օձիք ունի, որը ծածկում են ոսկրէ կամ պղնձէ կոճակներով։

Ա.բա: Կարում են տեղական բրդից շինած հաբայից. ձգում են քուլաչայի վրայից ձմեռ ժամանակ կամ տօն օրերին։ Ծածկում է ամբողջ շորերը և հասնում մինչև ոտները։

Գղակ: Գլխներին դնում են թաղիքից (նամադ) պատրաստուած գլխարկ. դա կլոր է և ունի 3—4 վերշօկ բարձրութիւն։

Կoշիկ: Ձմեռ ժամանակ հագնում են ոտներին տրեխ (չարուխ). դա պատրաստում են նրբանը եզան կամ կովի կաշուց, որ ամրացնում են ոտքերին մի քանի կարգ բրդի թելէ կապիճներով. դրանով խաչաձև փաթաթում են ոտքը և կապում կաշի զանազան մասերի հետ, իսկ ամառ ժամանակ հագնում են պարսկական «գիվա», որի վերին երեսը գործում են սպիտակ թելից, իսկ նրբանը շինում զանազան ցընցոտիներից։ Ա.յդ գիվայով ման եկած ժամանակ ոտքը շատ հանգիստ է պահում և երթևեկութիւնը հեշտութեամբ կատարում։ Բացի սրանից հագնում են նաև «սօռ», որի տակը պատրաստում են կաշուց, իսկ երեսը գործում են բամբակէ թելով։

## ԿԱՆԱՆՑ ՏԱՐԱԶԸ

—

Շապիկ: Կնոջ շապիկը շատ երկար է, հասնում է մինչև